

ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիտաւեց'ից

Սյնտեղ, ուր ծովը ժայռերն էր կոծում,
Կանգնած էր շիտակ արմաւի մի ծառ.
Թառամում էր նա, անդադար թախծում—
Ինքն էլ չգիտէր, թէ ինչի համար:

Վաղուց ամպ չկար երկնքի վրան,
Քարն արմատները չորցրել էր անխնայ,
Արփին բոցի պէս այրում էր նրան,
Բայց չնաշխարհիկ, աննման էր նա:

Խօսուն ալիքներ քնքշանքով լցուած՝
Նրա մօտ էին վազ տալիս կայտառ...
Ծառը պատասխան չէր տալիս նրանց—
Ինքն էլ չգիտէր, թէ ինչի համար:

Եւ ահա ելաւ կոհակն իններորդ՝
Հսկայ, փրփրադէզ, ահագնադղորդ...
Ողջն աւերելով՝ դալիս էր սրտոտ
Եւ հնչում. «Կ'առնե՛մ, կ'առնե՛մ քեզ ինձ մօտ»:

Բայց ճերմակ կրծքով քաջը հեւիհեւ
Ժայռին զարնուեց, փշրուեց իսպառ...
Իսկ արմաւենին թօշնում էր վերև—
Ինքն էլ չգիտէր, թէ ինչի համար:

Ս. ԲԱՅԻՅԱՆ